«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

28 օգոստոսի 2019 թվականի

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի նիստի N 11 արձանագրությամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի նիստի N 11 արձանագրությամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգում» (այսուհետ՝ կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 21-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգով սահմանված կարգով մրցույթի արդյունքները ներկայացվում են համալսարանի գիտական խորհրդին, որը իր կանոնակարգով սահմանված կարգով կատարում է ընտրություն: Ընտրված հավակնորդի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր՝ սույն կանոնակարգով տվյալ պաշտոնի համար նախատեսված ժամկետով: Մի քանի թեկնածուի ընտրվելու դեպքում նրանց միջև դասաժամերի բաշխումն իրականացվում է ըստ նրանց առաջնահերթությունների (որոշված համապատասխան հանձնաժողովի կողմից):»:

2) 22-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Գիտական խորհրդին ներկայացվում են բոլոր այն հավակնորդների թեկնածությունները, որոնք սույն կանոնակարգի պահանջների և N 3 հավելվածի չափանիշների համաձայն հանձնաժողովի կողմից ընտրվել են առնվազն մեկ դասընթացի համար:»:

3) 22-րդ կետի 7-րդ ենթակետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) Գիտական խորհրդի նիստին պրոֆեսորի պաշտոնի հավակնորդների ներկայությունը պարտադիր չէ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. օգոստոսի 28

Երևան